«Նոր ժամանակի կրթություն»
ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Էպոսի դերը հայրենասիրության և արզգային արժեհամակարգի ձևավորման գործընթացում

Առարկան՝ Գրականություն

Հետազոտող ուսուցիչ՝ Է.Գլջյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի համար 101 միջն դպրոց

Թեմա ՝ Էպոսի դերը հայրենասիրության և արզգային արժեհամակարգի ձևավորման գործընթացում

Հարց՝ Ի՞նչ է հայրենասիրությունը և ինչպես այն դաստիարակել գեղարվեստական ստեղծագործության միջոցով:
Ինչպես հարստացնել սովորողների ազգային արժեհամակարգը:

Հետազոտության նպատակը՝

Նպատակը---Այս թեմայի հետազոտության նպատակն է ուսումնասիրել և ներկայացնել էպոսում արտահայտված գաղափարները՝ մասնավորապես և ազգային արժեհամակարգը

2 .,,Սասունցի Դավիթ,, էպոսի ուսումնասիրմանը զուգահեռ մշակել և փորձարկել բնագրային մի շարք տարրերի ուսուցման այնպիսի , մեթոդներ ու միջոցներ որոնք կնպաստեն սովորողների հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ընկալմանն ու ձևավորմանը ։

Նշված նպատակին հասնելու համար առանձնացնել հետևյալ խնդիրները՝

Ուսումնասիրել---- ,,Սասունցի Դավիթ,, էպոսի ընդգրկվածությունը գրականության դասագրքում.

ՈՒՈՒՄՆԱՍԻՐԵԼ---------- էպոսի լեզվական առանձնահատկությունները որպես ազգային ինքնության և արժեհամակարգի ընկալման միջոց .
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.Ներածություն----------4 էջ

2.Սասնա ծռեր էպոսի գրական մշակումները----------6 էջ

3.«Սասունցի Դավիթ» էպոսի դերը արժեքային համակարգի ձևավորման գործում ----------9էջ 4. <<Սասունցի Դավիթ>> էպոսի դերը հայրենասիրության ձևավորման գործում----------15էջ

5Գործնական աշխատանք ----------18 էջ

Եզրակացություն----------20էջ
Օգտագործված գրականության ————————————————21 էջ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշակերտներին հայրենասիրության ոգով դաստիարակելու և նրա մեջ ազգային արժեհամակարգ ձևավորելու գործում կարևորվում են բազմաթիվ գործոններ՝ կրթությունը, մշակույթը, լեզուն, ընդհանուր ծագման գաղափարը, պատմությունը, առասպելաբանությունը, կրոնը և այլն։

Հատկապես կարևոր է անհատի մոտ ազգային ինքնագիտակցության ձևավորման պրոսեցը սկսել վաղ՝ դպրոցական տարիքից։ Դպրոցական ծրագրով

նախատեսված որոշ առարկաների միջոցով (հայոց պատմություն, հայոց լեզու և հայ գրականություն) փոխանցվում են հայ ժողովրդի պատմության հերոսական էջերը, ազգային մշակութային առանձնահատկությունները:

Հայ ժողովրդական բանահյուսության մեջ հատկապես առկա են դրվագներ, որոնցում վառ են ներկայացված հայրենասիրության և ազգային արժեհամակարգի գաղափարները:

Նման կարևորագույն դրվագներից է ժողովրդական բանահյուսության հիման վրա ստեղծված «Սասնա ծռեր» (կամ «Սասունցի Դավիթ») հայ ժողովրդի ազգային էպոսը (դյուցազնավեպ):

Այն ձևավորվել է VIII-X դարերում տեղի ունեցած պատմական մեծ իրադարձությունների ընթացքում՝ որպես արաբ զավթիչների դեմ հայության մղած տևական պայքարի և նվաճված անկախության գեղարվեստական արտահայտություն: Էպոսն արտացոլում է հայ ժողովրդի հավաքական մտածողությունը, նրա կենսասիրությունն ու բարոյական ըմբռնումները, ազատասիրական ոգին, բացահայտում է հայ ժողովրդի բոլոր ազգային գծերը՝ ազնվություն, արդարություն, բարություն և քաջություն: Էպոսն առանձնահատուկ է նաև նրանով, որ հերոսական անպարտելի ոգի ունեն բոլոր չորս ճյուղերի բոլոր գլխավոր հերոսները: Առասպելական հերոսներն իրենց ուրույն ուժով և համարձակությամբ պատրաստ են ցանկացած գործի ՝ իրենց ժողովրդին փրկելու համար:

Քանի որ ազգային ինքնության դրսևորումները հատկապես վառ և տպավորիչ են ներկայացված հայոց դյուցազնավեպում, ապա ժամանակակից սերնդի բարոյախրատական դաստիարակության, հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման համար չափազանց կարևոր է կրթական գործընթացում ժողովրդական էպոսի լիարժեք կիրառությունը:

«Սասունցի Դավիթ» էպոսի, ուսուցումը և յուրացումը եղել ու մնում է հայ դպրոցի ուսուցչի հիմնական խնդիրներից մեկը: Էպոսի համահավաք բնագրի յուրացումը պարտադիր է ոչ միայն դպրոցի աշակերտների համար՝ հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման խնդիրները լուծելու, այլև համալսարանների բոլոր ֆակուլտետների ուսանողության համար, որովհետև

դրանք բոլորը պատրաստում են ապագա ուսուցչին, որն իր ազգային մտածողությամբ ու համամարդկային ընկալումներով առաջադեմ լինելու պարտավորվածություն ունի:

Թեմայի կարևորությունը կայանում է նրանում, որ բացահայտվում են էպոսը հայրենասիրություն և ազգային արժեհամակարգ ձևավորող հզոր գործոն դարձնող պատճառները: Էպոսը՝ որպես ժողովրդական բանահյուսության օրինակ, ունենալով որոշակի կառուցվածք, իր մեջ կրում է ինֆորմացիայի փոխանցման տարբեր մեխանիզմներ՝ համեմատությունների, նկարագրությունների, մեկնաբանությունների տեսքով: Դրանք երևում են որոշ կարևորագույն դրվագներում՝ որոնք ունեն կոնկրետ բարոյախրատական կոնտեքստ և որոնց վրա հատկապես պետք է կենտրոնանալ՝ դպրոցում էպոսի ուսուցումը և յուրացումը կազմակերպելու համար: Աշխատանքում որոշակի անդրադարձ է արվել այդ դրվագներին: Փորձ է արվում նաև լուծում տալ դպրոցում էպոսի յուրացման բարդություններին:

Աշխատանքի նպատակն է ցույց տալ, որ «Սասնա ծռեր» էպոսի միջոցով հայ անհատի (աշակերտ, ուսանող, ուղղակի ընթերցող) մեջ հնարավոր է դաստիարակել հայրենասիրություն և ազգային արժեհամակարգ: Հնարավոր է, որ էպոսի ուսումնասիրությունից հետո ցանկություն առաջանա առավել խորությամբ ուսումնասիրելու հայ ազգի էթնիկ, մշակութային առանձնահատկությունները՝ հայի ինքնատիպությունը բացահայտելու համար: Այդ ինքնատիպության կոլեկտիվ պահպանումն էլ կհանդիսանա այն հզոր հիմքը, որի վրա հետագայում անհատը կկարողանա կառուցել զարգացած հայկական պետությունը:

ԳԼՈՒԽ 1

,,ՍԱՍՆԱ ԾՌԵՐ,, ԷՊՈՍԻ ԱՌԱՋԻՆ ԳՐԱՌՈՂՆԵՐԸ ԵՎ ՄՇԱԿՈՂՆԵՐԸ

Հայերը սիրում են լեգենդներ հյուսել: Դարերի ընթացքում ստեղծել բազմաթիվ առասպելներ և լեգենդներ, որոնք հարստացրել են հայ գրականությունը:Մեր ժողովրդի պատմությունը ճանաչել է բազմաթիվ տաղանդավոր պատմաբաններ ,գրողներ և բանաստեղծներ ,սակայն գրողների հետ միասին , ժողովուրդն էլ հյուսել է լեգենդներ ,որոնք տարածվել են բանավոր խոսքի միջոցով:

Հետագայում ,որպեսզի ժամանակի ընթացքում մոռացության չմատնվեն, այդ լեգենդներից շատերը գրանցվել են տարբեր գրողների կողմից։Հայկական ամենահայտնի լեգենդներից մեկը Սասունցի Դավթի պատմությունն է։,,Սասունցի Դավիթը,,հայ ժողովրդի ազգային էպոսն է՝ հիմված բանահյուսության վրա։

,,Սասնա ծռերը ,, հայ ազգային էպոսն է ,ստեղծվել է միջնադարում՝ արաբական արշավանքների ժամանակ։ «Սասնա ծռերը» հայտնաբերել և ամբողջությամբ գրառել է Գարեգին Սրվանձտյանը, 1873-ին։ Էպոսի գաղափարը հայ ժողովրդի հերոսական պայքարն է թշնամիների դեմ։«Սասնա ծռերը» բաղկացած է 4 ճյուղից, որոնցից յուրաքանչյուրը կոչվում է հերոսների անունով՝ «Սանասար և Բաղդասար», «Մեծ Մհեր», «Սասունցի Դավիթ» և «Փոքր Մհեր»։«Սասնա ծռերի» ամենաբնորոշ գիծը հայ դյուցազունների անպարտելիությունն է։ Իր սիրելի հերոսներին ժողովուրդն անվանել է «ծռեր», այսինքն՝ խենթ քաջեր։ Նրանք աչքի են ընկնում գեղեցկությամբ, դյուցազնական ուժով ու զորությամբ, որը ստանում են մայր բնությունից, հայրենի հողից ու ջրից։ Սասնա հերոսները որքան էլ ատում են բռնությունն ու ստրկությունը, կռվում թշնամիների դեմ, բայց ամենևին դաժան ու անհոգի չեն։Նրանք կռվում են միայն իրենց հայրենի հողը պաշտպանելու համար,երբեք իրենք չեն հարձակվում ուրիշի վրա։Էպոսը իր մեջ կրում է խաղաղության,ընտանիքի,մեծին հարգելու գաղափարը,որի համար 1964թ. Էպոսը վիպերգերի միջազգային մրցույթում ճանաչվել է լավագույնը։ Էպոսի ամբողջական, մշակված տարբերակը 1939թ. թարգմանվել է ռուսերեն, թարգմանվել է նաև ֆրանսերեն, չիներեն, անգլերեն, գերմաներեն, վրացերեն, ադրբեջաներեն և այլ լեզուներով։

«Սասնա ծռերը» հայտնաբերել և ամբողջությամբ գրառել է Գարեգին Սրվանձտյանը 1873ին, Մշո Առնիստ գյուղում, երեսփոխան Կրպոյից և հրատարակել Կոստանդնուպոլսում «Գրոց ու բրոց և Սասունցի Դավիթ կամ Մհերի դուռ» ։ Երկրորդ տարբերակը 1886-ին Էջմիածնում գրի է առել Մանուկ Աբեղյանը՝ Նախո քեռի Մոկացուց և հրատարակել Շուշիում«Դավիթ և Մհեր» ։Նորանոր տարբերակներ են գրառել Գ.Հովսեփյանը, Խ.Դաղյանը, Ս.Հայկունին, Ա.Աբեղյանը, Ե. Լալայանը, Կ.Մելիք–Օհանջանյանը, Ա.Ղանալանյանը և ուրիշներ։

1938-1939 թթ. «Սասնա ծռերի» 1000-ամյա հոբելյանի առթիվ մինչ այդ գրառված 60ից ավելի պատումների հիման վրա, Մ.Աբեղյանի, Գ.Աբովի, Ա.Ղանալանյանի խմբագրությամբ հյուսվել-կազմվել է մեկ միասնական համահավաք բնագիր «Սասունցի Դավիթ» : Վեպի մեկ այլ համահավաք բնագիր է կազմել Տ.Չիթունին Փարիզում «Սասունական»: «Սասնա ծռեր» դյուցազներգությունը ոգևորել է մեր շատ գրողների, ովքեր այդ նյութով գրել են ինքնուրույն պոեմեր: Դրանցից են Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթը» (1902), Ավետիք Իսահակյանի «Սասմա Մհեր»-ը (1917-1937), Եղիշե Չարենցի «Սասունցի Դավիթը» (1933): «Սասունցի Դավիթ» ճյուղը թատերգության են վերածել Հակոբ Օշականը (քնարախաղ)՝ կրելով Թումանյանի ակնհայտ ազդեցությունը, Վահան Թոթովենցը, Վաղարշ Վաղարշյանը: Այն արձակ վերապատմել է Նաիրի Զարյանը: «Սասնա ծռերը» ժամանակին ցանկանում էր մշակել Դանիել Վարուժանը: Փոքր Մհերի կերպարը ոգևորել է Հրանտ Մաթևոսյանին: Դյուցազներգության նյութով ստեղծված բոլոր գործերի մեջ լավագույնը Հ. Թումանյանի ,,Սասունցի Դավիթ ,,պոեմն է, որ նախատեսված էպոսին զուգընթաց անցնել իններորդ դասարանում: Պոեմն ,,ստեղծվել է հատկապես դեռահասների համար :Թումանյանն ինքը, լինելով մեծ մարդասեր, կարողացել է շատ խոր թափանցել մեր ազգային վեպի մարդասիրական տարերքի մեջ: Այս վերջին առումով էպոսի հերոսներից ամենաամբողջականն ու լիարժեքը Դավիթն է, ուստի և նրան է դիմել բանաստեղծը կատարյալ մարդու, մարդկային կատարյալ հարաբերությունների մասին սեփական պատկերացումներին մարմին տալու համար:Ամենայն հայոց բանաստեղծը ամբողջ կյանքում, իր ողջ ստեղծագործության մեջ հոգեպես ապրել է,, հաշտ ու խաղաղ մարդկության,,,մեծատառով Մարդու երազանքով և այդ երազանքը

մարմնավորված է տեսել մեր էպոսում՝ հանձին Դավթի:

Թումանյանի պոեմում Դավիթը նման է և նման չէ իր էպոսային նախատիպին նա ավելի շուտ բանաստեղծի ներքին մարդն է: Պոեմում հատուկ շեշտվում է Դավթի ազատասիրությունը,մարդասիրությունը,ազնվությունը,ուղղամտությունը,քնարակ ակն խառնվածքը մանկական պարզամտությունը անհաշտ վերաբերմունքը ամեն տեսակի բռնության նկատմամբ: Ինչպես էպոսում , այնպես էլ,, Սասունցի Դավիթ,,

պոեմում հաղթողը մարդկային- սկզբունքն է ,անմարդկայինը հակաբնական է և դատապարտված է պարտության: Բայց թումանյանական խոր կենսաիմացությունը չէր կարող շրջանցել այն

ԳԼՈՒԽ 2.

ՍԱՍՆԱ ԾՌԵՐ ԷՊՈՍԻ ԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԸ

«Սասունցի Դավիթ» էպոսի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման գործում Դպրոցում գրականություն առարկայի դասավանդման հայեցակետը սահմանում է առարկայի տեղը ուսումնական այլ առարկաների շարքում .,, Գրականության

ուսումնասիրությունը սովորողի բառապաշարի հարստացման, պատկերավոր մտածողության,երևակայության ու ստեղծագործական կարողությունների զարգացմանը և գրական ճաշակի ձևավորմանը զարգացման զուգընթաց աշխարհաճանաչողության, ինքնաճանաչման, ինքագնականահատման ու ինքնակատարելագործման արդյունավետ միջոց է և մեծապես նպաստում է բարձր բարոյական,գծերի՝պատասխանատվության,հայրենասիրության, քաղաքացիականպատասխանատվության ,մարդասիրության,կարեկցանքի ու հանդուրժողականության,ընկերասիրության և սոցիալ-հոգեբանական այլ արժեքների արմատավորմանը,զգացահուզական գաղափարական դաստիարակությանը ,,

1։Գրականության դասավանդման հիմնական նպատակներից մեկը ,բացի սովորողներին զուտ գրական երևույթներին ծանոթացնելուց , անհատի հոգևոր ու մտավոր զարգացմանը , անձի արժեքային համակարգի ձևավորմանը նպաստելն է։ Այս խնդրի իրականացման համար ամիրաժեշտ է սովորողին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի հոգևոր ժառանգությանը ,ազգային ու ,համամարդկային իդեալներին ու ձգտումներին , գրական հերոսների օրինակով և գրական երկերի գաղափարագեղարվեստական հարստության օգտագործումով նրանց մեջ դաստիարակել մարդասիրական ոգի , ինքնաճանաչում և այլն, այսինքն ՝ ձևավորել բարոյական բարձր արժեհամակարգ։ Հաշվի առնելով ժողովրդական բանահյուսության, մասնավորապես՝ էպոսի դերն ու նշանակությունն ազգային ինքնաճանաչողության գործում հետազոտության մեջ ուսումնասիրության առարկա է դարձել «Սասնա ծռեր» էպոսը: Հայկական էպոսում արտահայտվել է հայի հավաքական կերպարը իր բոլոր ներքին հակասություններով, սխրագործություններով ու դավաճանություններով, մեծագործություններով ու ազգադավ անտարբերությամբ, օտարամոլությամբ ու անմսացորդ նվիրումի արտահայտություններով: էպոսի հերոսների կերպարներում հայ մարդու հոգեկերտվածքի յուրահատկությունները դրսևորվել են դիցաբանական սյուժեների «զգեստավորմամբ», այլաբանական դիպվածներով և ծածկագրված խորհուրդներով, որոնք կարոտ են գաղտնազերծման և բազմակողմանի քննության: Հայկական էպոսում արտացոլվել են հայոց բարոյական արժեհամակարգի անկյունաքարային

գաղափարները, արծարծվել մարդասիրական բազմաթիվ հիմախնդիրներ, որոնց ուսումնասիրությունն արդիական է ժամանակակից քաղաքակրթական շարժընթացների համատեքստում: Էպոսում արտացոլված են ազգային ինքնության գծերը, որոնց բացահայտումը կարող է հնարավորություններ ընձեռնել քաղաքակրթական արդի հիմախնդիրների իմաստավորման, մերօրյա իրականության բազմաթիվ թերությունների ախտորոշման և հաղթահարման համար: Հումանիտար տարբեր գիտությունների հետազոտողներն ընդգծում են էպոսի էական նշանակությունն ազգային արժեքների ձևավորման ու պահպանման գործում փաստելով ազգային ինքնության արդիականացման և նորոգման բարդ գործընթացում այդ հավաքական և բացառիկ ստեղծագործության մեծ դերը: Հիմախնդրի գիտական մշակվածությունը: Չնայած հազարամյակների պատմություն ունենալուն հայկական էպոսը, որը հայտնի է «Սասնա ծռեր» կամ «Սասունցի Դավիթ» անվամբ, գիտական ուսումնասիրությունների առարկա է դարձել միայն սկսած 19- րդ դարավերջից:Դյուցազնավեպը սկզբնավորվել է Սասունում ,բայց աստիճանաբար տարածվել է ամբողջ ժողովրդի մեջ և դարձել համազգային: Դավթի կերպարում մարմնավորվել են իրեն ծնող ժողովրդի ազգային հատկանիշները :

,,Սասունցի Դավիթ,, էպոսը ամբողջովին ժողովրդական է ոչ միայն նրա համար ,որ կենսունակ ապրում է ժողովրդի բանավոր պատմության մեջ .էպոսը ինչպես ճիշտ նկատել է Հ.Օրբելին, ժողովրդական է,քանի որ նրա հերոսների աշխարհազգացությունն անխզելիորեն կապված է բուն ժողովրդի հետ : Հայկական էպոսի հերոսները դուրս են եկել ժողովրդի միջից և մշտապես կապված են մնացել նրա հետ : Նրանց բարքերը սովորությունները հասարակ մարդկանց , ժողովրդի կենցաղն է :Ժողովրդի հետ սերտորեն առնչված , պարզ ումիամիտ , բայցմծապես արդարամիտ լինելով՝միաժամանակ դրսևորում են ազնվականին հատուկ արժանապատիվ կեցվածք :

Դավթին տեսնում ենք գութանի ու գութանավորների հետ: Հյուրասիրվելով գութանավորների մոտ՝ Դավիթը սպառում է նրանց մեկ շաբաթվա սննդի պաշարը, որի պատճառով ստեղծվում է դժվարին կացություն: Դավիթը նրանց ազատում է

հոգսից՝ վեց օրվա վարը մի քանի ժամում կատարելով[1]։ Մարդու գոյության կարևոր նախապայմաններից մեկը հացն է, որը ստացվում է երկրագործի ծանր աշխատանքի միջոցով։ Աշխատանքը, գութանը ներկայանում է իբրև գոյության հիմք, իբրև առատության աղբյուր, այն ընդհանուր հարգանքի ու մեծարման է արժանանում։ Պատահական չէ, որ հնուց եկող ավանդությամբ հայ ժողովրդի բանահյուսության մեջ աշխատանքին ձոնված երգերի մեծ մասը կազմել են գութանին, վար ու ցանքին, բերքահավաքին նվիրված երգերը։ Դյուցազնավեպում ,ժողովուրդը կյանքի իմաստը տեսնում է խաղաղ աշխատանքի մեջ։ Ատելությամբ է վերաբերվում թալանով, կողոպուտով ապրողների նկատմամբ։ Արդար աշխատանքով, սեփական քրտինքով հաց վաստակելը ներկայանում է որպես սկզբունք, որպես միակ ընդունելի միջոց։ Հայկական էպոսում լայն տեղ է տրվում հնից ժառանգած և հայժողովրդիհամար ավանդություն դարձած կյանքի երևույթներին, դարերի ընթացքում ձևավորված, նրան հարազատ դարձած, նրա կենցաղի մեջ մտած ազգային սովորություն դարձած մարդկային հատկանիշներին։ Դրանցից են ընտանիքի մեծի նկատմամբ խոր հարգանք ունենալը, նրան ենթարկվելը, անչափահաս ժառանգին հորեղբոր, մորեղբոր կողմից խնամելը, ապա նրա հովանավոր, խորհրդատու դառնալը, փորձով իմաստնացած մեծահասակ մարդկանց խորհուրդներին լսելը։ Դավիթը քանիցս ականջալուր է լինում կորեկի արտի տեր պառավ հայ կնոջ խորհուրդներին և մշտապես հաջողության է հասնում։ Նա երբ անխնա կոտորում էր Մըսրա Մելիքի զորքին, յոթ տղաների հետ կռվի դաշտ բերված գլխաբաց արաբ ծերունին խնդրանքով դիմում է Դավթին և դադարեցնել է տալիս կոտորածը։

«Սասունցի Դավիթ» էպոսի առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ նրա հերոսները թշնամու դեմ մենակ են հանդես գալիս։ Մյուս ժողովուրդների էպոսների հերոսները, որպես կանոն, զորքով են կռվի մեջ մտնում։ Հայկական դյուցազնավեպում դավաճանություն չենք տեսնում։ Պատմական անցյալում

---

[1] Ասաց,– դուք էստեղ քիչ մի նստեք, ես կելնեմ,
էն վեց ավուր գութան Մեկ ժամվա մեջ կանեմ։

Հայաստանում առանձին նախարարների, իշխանների կողմից նման դեպքեր եղել են, բայց քանի որ դավաճանությունն ընդհանուր առմամբ անհարիր է հայ ժողովրդի ոգուն՝ էպոսում տեղ չի գտել։ Տարբեր ժողովուրդների էպոսներում կինը հաճախ դավաճանի կամ դատապարտելի արարքների հեղինակ է հանդես գալիս։ «Սասունցի Դավիթ» էպոսում, ընդհակառակն, կինը երևան է գալիս անձնազոհ մարդասիրությամբ։ Թագավորի դուստր Ծովինարը, տեսնելով, որ խալիֆի հարսնացու դառնալուն համաձայնություն

չտալով երկիրն ավերվելու է, ժողովուրդը՝ կոտորվելու, գնում է ինքնազոհության։ Հայ կինը էպոսի հերոսների նման ու նրանց կողքին հայրենասիրության, ժողովրդավարության վառ օրինակ է տալիս։ ժողովրդական վիպերգությունները, ինչպես նշում է Հ. Թումանյանը,որքանէլ ազգային լինեն, համամարդկային շատ գծեր ունեն։ Հայկական էպոսում բավականաչափ ցայտուն է արտահայտվել այդ հանգամանքը։ Ազատության գաղափարը էպոսում սահման չի ճանաչում, չի պարփակվում իր ժողովրդի շրջանակներով, այլ հնչում է որպես համընդհանուր գաղափար, դառնում սրբություն։ Ահա դրա մեկ օրինակը. Դավիթը քանդում է հոր որսատեղի պարիսպները և ազատություն է տալիս անգամ որսի կենդանիներին։ ժողովուրդների համերաշխության գաղափարը կարմիր թելի նման անցնում է ամբողջ դյուցազներգության միջով։ Մըսրա Մելիքի սպանությունից հետո Դավիթը նրա զորքին որևէ պահանջ չի առաջադրում, ոչ էլ հալածում է, այլ խաղաղ կյանքով ապրելու հորդոր է անում։ Էպոսում չկա կրոնական անհանդուրժողականություն, կռիվը գնում է այլ դավանանք ունեցող օտարերկրացու դեմ։ Թշնամու դեմ պայքարը գնում է ոչ թե դավանանքի, այլ նրա հարկային ծանր բեռը թոթափելու, ազատ ապրելու համար։ Կրոնական տարբեր դավանանքին որևէ նշանակություն չի տրվում։ «Սասունցի Դավիթ» էպոսը օտար բռնակալության դեմ հայ ժողովրդի դարավոր պայքարը ներկայացնող էպիկական հուշարձան է, աշխարհի էպիկական ստեղծագործությունների շարքում լավագույն հուշարձաններից է։ Լայն ընդգրկումով, կառուցվածքի ամբողջականությամբ, ժողովրդավարությամբ, ազգային ոգին համակողմանիորեն արտահայտելու հատկանիշներով առանձնանում է շատ ժողովուրդների դյուցազնավեպերից։ Հայկական էպոսի նշված հատկանիշները համամարդկային բնույթ ունեն, որոնք ձևավորվել, մշակվել են

դարերի ընթացքում և բնորոշ են հայ ժողովրդին։ Պատմության հոլովույթում օտարերկրյա հզոր ուժերը հաճախ ավերել են մեր երկիրը, ոչնչացրել պատմական հուշարձանները, հոգևոր և աշխարհիկ շինությունները, բայց չեն կարողացել ընկճել հայ ժողովրդի՝ ազատության ձգտող կենդանի ոգին։ Սա է «Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի հիմնական գաղափարը, նրա էությունը։ Էպոսի գլխավոր նպատակներից մեկն էլ մարդասիրության դաստիարակումն է։ Առաջին ճյուղում արդեն Սասունում հաստատված Սանասարն ու Բաղդասարը սկսում են կառուցել իրենց բերդը։ Բայց սկզբում կացարաններ են պատրաստում աշխատավոր մարդկանց համար։ Այդ քայլի նպատակը մարդասիրական է. Բաղդասար պատասխանեց.

-Առաջ շինենք զէդոնց տներ, Ու նոր շինենք զմեր բերդ.

Էդ խեղճ մարդեր չեն կարնա Արևուն առջև կենա։

Ու սկսեցին զտներ (էջ 34)։

Էպոսում կա աշխատավոր մարդու նկատմամբ հատուկ պաշտամունք, և Սասնա դյուցազուններն ապրում են այդ գիտակցությամբ «Նրանց բնավորության ժողովրդական բնույթը սրանով չի ավարտվում։ Նրանք պարզությամբ տիրապետում են ամենահամեստ արհեստների, բարեկամանում են խեղճերի հետ, կամովին ձեռք են մեկնում հոգնած գեղջուկներին, նույնիսկ, եթե նրանք ճանապարհին հանդիպած օտարականներ են։ Հայկական էպոսում վիպական հերոսները փոքր հասակից չեն ստանում քիչ թե շատ համակարգված ռազմական (առնական) դաստիարակություն, ավելին, իրենք են մեծերից պահանջում իրենց ինչ-որ բան սովորեցնել։ Այսպես, Մեծ Միհերը վանք-վարժատնում կարճ ժամանակ ուսանելուց հետո յոթ տարեկանում դիմում է մորը.

Մարե՛, հերիք էսպես մնամ.

Հրաման տու ինձ՝ էրթամ սարեր, քարեր շրջեմ,
Գազան ու հավք զարկեմ,

Մարդերու շարք մտնեմ ։

Էպոսի տարբեր էջերում տեսնում ենք քրիստոնեական պաշտամունքի դրսևորումներ։ Դրանց առաջին ապացույցներից մեկն այն է, որ Ծովինարը ձևական է ամուսնանում Բաղդադի խալիֆի հետ, որը մահմեդական էր (էպոսում՝ կռապաշտ), և քրիստոնեական կրոնը նման ամուսնություն չի թույլատրում։ Ծովինարն իր հետ

օտար երկիր է տանում նաև քահանա՝ շեշտելով ցմահ քրիստոնյա մնալու ձգտումը: Ավելին, Ծովինարի խնդրանքով քահանան Բաղդադում Սանասարին ու Բաղդասարին հայերեն գրել-կարդալ է սովորեցնում. Սանասար ու Բաղդասար պետ կտրիճներ դարձան. Մերն ասաց քահանային. - Տե՛ր տեր, Իմ տղաներին դաս տուր՝ կարդան:

Դաս էտու տղաներին.

Էնոնք գրել - կարդալ սովորեցին (էջ 13):

Քրիստոնեական կրոնի ցայտուն դրսևորում է նաև Սասնա դյուցազունների թևի վրայի եղած խաչը, որը, նայած հանգամանքների, գունափոխվում է: Ինչպես նկատել են էպոսագետները, հայկական էպոսում առկա են հնագույն հավատալիքների հետքեր, հեթանոսական հավատալիքներ: Օրինակ՝ Մեծ Մսրա Մելիքը և Մեծ Միհրը դաշն են կնքում, ըստ որի, յուրաքանչյուրի մահից հետո մյուսը նրա կնոջն ու երեխաներին պետք է խնամի, և այդ դաշինքը հաստատում են ոչ թե Ավետարանի կամ Ղուրանի վրա երդվելով, այլ իրենց մատների արյունը խառնելով.

Մատներ կտրին, արուն արնի խառնեցին, Պայման դրին, էղան աղբեր (էջ 117):

ԳԼՈՒԽ 3.

ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ» ԷՊՈՍԻ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մեր էպոսի հոյակապ հերոսները դարերի ընթացքում հայ ժողովրդի համար եղել են ոգևորության աղբյուր: Ժողովուրդը ներշնչվել է նրանից ու անձնուրաց կռվել է իր

գոյության, հարատևության և իր հայրենիքի բարօրության և ազատության համար: Մեր երիտասարդ սերնդի համար Սասունցի Դավիթը նույն ներշնչանքը պիտի լինի, Դավթի պես բոցավառվի հայրենիքի համար անշահասեր արիությամբ և զինված գիտությամբ ու տեխնիկայով, ինչպես Դավիթն ու Միհրն են զինված կայծակե թրով, սխրագործություններ կատարի իր սեփական ժողովրդի և ամբողջ աշխատավոր մարդկության ազատագրման և բախտավորության համար»,- իր հոդվածում գրում է Ավետիք Իսահակյանը: «Գրական թերթի» 1939 թվի սեպտեմբերի 15-ի համարում հայ արձակագիր, թարգմանիչ Հմայակ Ոսկանյանը (Սիրաս) իր «Արժանապատվություն, անձնուրացություն, հավատ» հոդվածում գրում է. ««Սասունցի Դավիթ» հերոսական էպոսի մեջ խտացված է հայ ժողովրդի բախտը, հայ աշխատավոր ժողովրդի ճակատագիրն՝ իր բոլոր առանձնահատուկ կողմերով, որին Հայաստանը ենթակա է եղել դարերի ընթացքում: Մեր էպոսը խորին արժանապատվության, անհասանելի անձնուրացության և պայծառ հավատի չքնաղ կերտվածք է: Եվ եզրակացությունն այն է, որ թշնամու դեմ պայքարելիս հայ ժողովուրդը միշտ պահել է սեփական արժանապատվությունը՝ երբեք չդավաճանելով հիմնական սկզբունքներին: Հանուն հայրենիքի պետք է կռվել անձնվիրաբար, առանց որևէ կողմնակի նկառատումների, սկսած գործը հասցնել մինչև վերջ: «Սասունցի Դավիթ» էպոսի բացառիկ արժեքներից մեկը նրանում արտահայտված գաղափարներն են: Բնականաբար, առաջատար գաղափարը հայրենասիրությունն է, որի մարմնավորողը հայ կինն է՝ Ծովինարը: Բաղդադի խալիֆի հարկահանները գալիս են՝ տանելու հարկը հայոց Գագիկ թագավորից: Ծովինարի գեղեցկությունը տեսնելով («Աղջիկ էնպես խորոտ, էնպես խորոտ»)՝ որոշում են խալիֆին համոզել հարկի փոխարեն կնության առնել Ծովինարին:

Խալիֆը պահանջում է Ծովինարին՝ զգուշացնելով, որ մերժման դեպքում կավերի Հայաստանը: Հարցի լուծումը գտնում է հայրենասեր Ծովինարը՝ կամովին իրեն զոհելով հանուն երկրի ու ազգականների.

Ծովինար խանում ասաց.

-Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ, Զամեն տի սպանի իմ պատճառով, Աղեկն էն է, ե՛ս էրթամ,

Ուրիշ մարդու թող բան չըլնի:

Ե՛ս մենակ մեռնիմ իմ հոր թերեն. Ես մեկ ջան եմ, էրթամ, կորսվիմ,
Քանց մեր Հայաստան էրկիր ավերի,
Էն հազար-հազար հոգիք կորուսանին:
Դարձավ ասաց. -Հայրի՛կ, ինձ տուր էնոր:

Էպոսի դյուցազունները խալիֆի զավակները չեն, նրանք ջրածին են, ավելին՝ ջուրը Հայաստանինն է: Սա շատ կարևոր դրվագ է: Ընդհանրապես հայրենիքը, հայրենի եզեր- քը խորհրդանշում են հողը, ջուրը, մարդու հարազատները:

Ծովինարը հայ միջնադարյան գրականության մեջ ունի նախատիպ՝ Տիգրանուհին՝ Տիգրան Երվանդյանի քույրը, որն իմանալով ամուսնու՝ Մարաց Աժդահակի նենգ նպա- տակները, ծածուկ սուրհանդակ է ուղարկում Տիգրանի մոտ և կանխում եղբոր դեմ նյութված դավադրությունը. «Իսկ խորագետ գեղեցկուհին, այս դավաճանությունը հասկանալով՝ սիրալիր խոսքերով պատասխանում է Աժդահակին և մտերիմների միջո- ցով շտապով եղբորը հայտնում է (Աժդահակի) նենգությունը»:

Հայոց ինքնության մեջ արմատավորված երևույթ է իրականությունը գերազանցապես բարոյականության դիրքերից, բարոյական հասկացություններով (պարտք, պատասխանատվություն, արդարություն, խիղճ, ամոթ և այլն) իմաստավորելն ու գնահատելը, սեփական բարոյական չափանիշներով մարդկանց վարքի, բարոյական այլ համակարգերի արժևորումը՝ ի հաշիվ վարքի կարգավորման ու գնահատման իրավական, քաղաքական, տնտեսական և այլ ձևերի: Եվ, որպես դրա հետևանք, հայոց ազգային նկարագրում տեսնում ենք՝ հումանիզմ առանց սահմանների, օտարամոլություն, թշնամու նկատմամբ չափազանց մեծահոգություն, անշրջահայացություն ու աններելի հանդուրժողականություն, անհիշաչար ու անձնուրաց վերաբերմունք և առհասարակ իշխելու, տիրելու կամքի բացակայություն: Հայկական էպոսում զարմացնում է իրենց երկրի պաշտպանության նկատմամբ սասունցիների դրսևորած անհոգ վերաբերմունքը: Այսպես, Սասունը շրջապատված է թշնամիներով, սակայն չունի ո՛չ զորք, ո՛չ զորավարներ, ո՛չ պաշտպանական կառույցներ, ո՛չ էլ լրջմիտ մարդիկ, ովքեր դրանց մասին կմտածեն: Հերոսները գալիս-գնում են, սակայն չի փոխվում Սասունի կարգավիճակը. Սասունը մնում է որպես հարկատու երկիր, որովհետև չունի ո՛չ անկախ

իշխանություն, ո՛չ բանակ, ո՛չ էլ հզորանալու գաղափար: Այսինքն՝ հայն իր պատմության ընթացքում չի ցուցաբերել, չնչին բացառություններով, ուրիշներին իշխելու, կառավարելու, ուրիշներին ենթարկեցնելու ո՛չ կամք, ո՛չ ջանք, ո՛չ էլ ցանկություն:

Ներողամտությունը, հանդուրժողականությունը, թշնամուն ատելու 12 Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն, Եր., 1982, էջ 148: 13 Ս. Մ. Գաբրիէլեան, Հայկական ճգնաժամ եւ Վերածնութիւն, 2-րդ հրատ., Պոսթոն, 1909, էջ 38: 12 անկարողությունը դժբախտաբար ուղեկցվում է իշխելու, նվաճելու, տիրելու կամքի բացակայությամբ:

Պատմությունը ցույց տվեց, որ նման բարոյական սկզբունքներով ու բարոյական արժեքներով, վարքագծով ու վերաբերմունքով առաջնորդվելիս ի վերջո չես կարող խուսափել կոտորածներից, ցեղասպանությունից և հայրենազրկությունից: Այսքանից հետո ինչո՞ւ զարմանալ ցեղասպանությունը վերապրած հայ մտածողի, քաղաքական գործչի պոռթկումի, Նիցշեի բառերով ասած՝ «բար Արաբ ծերունու խոսքերում տեսնում ենք հայ ժողովրդի՝ պատերազմը դատապարտող հավաքական խոսքը: Նախ, ծերունին բացատրում է, թե նրանք՝ այսինքն արաբ զինվորները, մարդիկ են: Մարդը մարդուն իրավունք չունի կյանքից զրկելու, բացի այդ, կա հարազատի կյանքի կորստի համար նրա արյունակիցների անանց վիշտը: Այդ զինվորներն ունեն ընտանիք, կին, երեխաներ. ո՛րն իր մոր միանուագար զավակն է, ո՛րն ընդամենը նոր է ամուսնացել, ո՛րն իր օջախի սյունն է, և բոլորին էլ Մսրա Մելիքը ուժով ու ստիպելով է բերել պատերազմ:

«Սասունցի Դավիթ» էպոսում հնչող ծերունու այս խոսքերն ասված են բոլոր ժամանակների համար. դրանք արդիական են նաև այսօր:

«Սասունցի Դավիթ» էպոսի դարավոր պատմությունն ապացուցում է, թե ինչպես է բանահյուսական այդ գանձը դարեր ի վեր ոգևորել հայ ժողովրդին, իշխել նրա մտքի ու սրտի վրա և հասել նոր ժամանակներին ու այսօր էլ իր գաղափարներով խիստ այժմեական է և հուզիչ:

Գործնական աշխատանք

Խոսելով էպոսում արտահայտված ազգային արժեքների և գաղափարների մասին, վերլուծելով հերոսների արաքներն ու հասարակական վարքը՝ ուսուցիչը աշակերտներին ուղղորդում է խորհելու այդ գաղափարների և բարոյական արժեքների արդիականության մասին: Ուսուցիչը դասարանը բաժանում է խմբերի և նրանց բաժանում թղթեր, որոնց վրա գրված են նախապես էպոսից դուրս բերված հատվածներ: Դրանք հատուկ ընտրված հատվածներ են, որոնցում ցայտուն երևում են էպոսի հերոսների բնավորության կարևոր և ուշագրավ գծերը:

Առաջին խումբը, կարդալով հատվածը, պետք է ցույց տա, թե ինչ գաղափար է արտացոլված նրանում,առանձնացնում այն նախադասությունը,որը ցույց է տալիս ժողովուրդների վերաբերմունքը պատերազմների նկատմամբ:

Երկրորդ խումբը, կարդալով հատվածը, պետք է առանձնացնի այն նախադասությունները, որոնցում երևում է Դավթի միամտությունը և մեկնաբանի: Երրորդ խումբը պետք է կարդա հատվածը և մեկնաբանի, թե ինչ գաղափար է այն արտահայտում:

Չորրորդ խումբը, կարդալով հատվածը, փորձում է մեկնաբանել Դավթի արարքը: Հատվածները ամփոփում են էպոսում արտահայտվա ազատաբաղձությունը, հայրենասիրությունը,ժողովուրդների խաղաղ գոյակցելու ցանկությունը, հայ ժողովրդի,միամտությունը,մարդասիրությունն ու աշխատասիրությունը, ինչպես նաև ընդգծում, որ մեր ազգային էպոսը մեր ազգային նկարագիրն է: Ուսուցիչը, հետևելով խմբերի աշխատանքին հավանություն է տալիս, գնահատանքի խոսքեր ասում կամ հարկ եղած դեպքում բարելավման ուղիներ առաջարկում :

Այնուհետև Ուսուցիչը թղթերի վրա ներկայացնում է հերոսների անունները, որոշ բնութագրիչ հատկանիշների հետ, իսկ աշակերտները պիտի կատարեն համապատասխանեցում:Ուսուցիչը հետևում է գործընթացին և գնահատում սովորողների աշխատանքները: Աշխատանքը կատարելուց հետո պարզ դարցավ, որ սովորողների մեծամասնությունը հասկացել էր նյութը:

Ստորև ներկայացնենք հետազոտության արդյունքները:

Արժեհամակարգի ձևավորումը էպոսի ուսուցման միջոցով Չի նպաստում

Նպաստում է արժեքների ձևավորմանը



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ էպոսը հնարավորություն է տալիս հասկանալու՝ ո՞վ ենք մենք, որտեղի՞ց ենք գալիս և ո՞ւր ենք գնում։

Նա նպաստում է սովորողների հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորմանը։

Բարոյական, գեղագիտական, ստեղծագործական արժեքներն ընկալելու համար անհրաժեշտ է, որ սովորողները

- մտածեն ընթերցած ստեղծագործության գաղափարական բովանդակության շուրջ.
- կարողանան վերլուծել և դատողություններ անել.
- ապրումակցել հերոսներին.
- գնահատեն նրանց արարքները
- համեմատեն իրենց և հերոսներին.
- ձգտեն կատարել բարոյական նորմերին համապատասխան գործեր

Հետազոտությունը ցույց տվեց, որ սովորողները կարդալով, վերլուծելով էպոսը, կտոգորվեն հայրենասիրությամբ, կճանաչեն մեր պատմությունը, մշակույթի գանձերը և կգիտակցեն, որ իրենք են այդ ամենի ժառանգորդը, պահապանն ու սերնդեսերունդ փոխանցողը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Աբեղան Մ., Երկեր, հ. Ա, Ե., 1966, 420 էջ։
- Գյուրջինյան Դ., «Մատենիկ», ընթերցանության գիրք, Երևան, 2012, 305 էջ։
- Թիրաբյան Ն.Հ., «Կամար» Գրականութեան և և գեղարուեստի անկախ պարբերաթերթ,

Պեյրութ, 2016, 84 էջ։

- Զանփոլադյան Մ., - 1969, Թումանյանը և հայ ժողովրդական էպոսը, Երևան, 1969, 199 էջ։

  Զանփոլադյան Մ., - Սասունցի Դավիթ, առաջաբանը՝ Ս. Հարությունյանի, Երևան 1981։ 6. Ղանալանյան Ա. «Սասունցի Դավիթ», Հայկական ժողովրդական էպոս, , Երևան, 1939, 383 էջ։
- Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Լ, Մ.Խերանյանի «Սասնա տուն» դյուցազնավեպի համառոտ վերապատմում, Երևան, 2015, 135 էջ
- –Բյուրք<յան Լ.Լ, Տեր-Գրիգորյան Ա., ճանաչեր երկիրը քո, Գիրք Գ, Ծաղկաքաղ հայկական հուշարձանների, Երևան, էդիթ Պրինտ, 2012, 120 էջ։
- Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Ա., ճանաչեր երկիրը քո, Գիրք Ե, Ես իմ անուշ Հայաստանի,

  Երևան, էդիթ Պրինտ, 2012, 120 էջ։
- Օրբելի - 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956։
- Բյուրքյան Լ.Լ, Տեր-Գրիգորյան Ա., ճանաչեր երկիրը քո, Գիրք Գ, Ծաղկաքաղ հայկական հուշարձանների, Երևան, էդիթ Պրինտ, 2012, 120 էջ։
- Քյուրքչյան Ա., Տեր-Գրիգորյան Ա., ճանաչեր երկիրը քո, Գիրք Ե, Ես իմ անուշ Հայաստանի,

  Երևան, էդիթ Պրինտ, 2012, 120 էջ։
- Օրբելի - 1956, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1956։